յայտնի է Ղուբայեցւոց և Դարբանդեցւոց՝ տեղը - մանաւանդ Խաչմասեցւոց։

Ցիշեալ պ. Պետրոսը նոյնպէս յայտնի է ղուբայեցւոց և դարբանդեցւոց իբրեւ մի քաջազուն և հանճարեղ մարդ, որոյ նախնիքն Ղափլան Ղազարը, ինչպէս պատմում են, մեծին Պետրոսի ժամանակի մարդ է եղել և ներկայացել է Նորին Մեծութեան Դարբանդում, որոյ թոռն Բալայ Ղազար ծանօթ և սիրելի է եղել Դարբանդի Լէզկի Ջամխալ խանին, որից և ստացել է պարգեւ քանի գիւղեր, ի թիւս որոց և այս Խաչմաս գիւղը, բայց ափսոս, որ վերջին Պետրոսը չէ կարողացել պահպանել այն գիւղօրայքը։ Այս Խաչմասի և Մօլլա Խալիլի ընդարձակ գերեզմաններից երեւում է, որ երբեմն հայոց բաւական բազմութիւն բնակուել են այս կողմերումն, մանաւանդ Աղուանից թագաւորաց ժամանակը, որք ինչպէս վերեւը գրել եմ, պարսից և օսմանցւոց բռնութիւնից նեղացած՝ թողել հեռացել են Կովկասու միւս կողմը և բնակուել են Մօզդօք, Ղըզլար, Պետրովսկի, և այլն։ Ուստի և Ղուբայու գաւառը զրկուել է իւր բնիկ բնակիչ հայերից, իսկ Աղուանից ազգին Լանկ Թամուրը գերելով տարաւ և բնակեցրեց այժմեան Աղուանստանը (Խիվայ, Վրկանաց աշխարհ). մնացածն էլ Ա. Շահաբասը բռնութեամբ թուրքացնելով Շահ—Սէվան անունով մխիթարեց ու վարձատրեց, ի թիւս որոց և շատ հայերի և բազմաթիւ վրացւոց, ինչպէս Առաքել պատմագիր վարդապետը գրել է։

Իսկ Աղուանից մնացորդներից հազիւ մնացել են 2-3 հազար տուն և մնացել են հայոց հետ, ինչպէս և ի սկզբանէ կըրօնով և դաւանութեամբ մի էին մեզ հետ։ Այն Աղուանից մնացորդներն, ինչպէս վերեւն ասել եմ, լեզուով, սովորութիւնով, կենցաղավարութիւնով են, են բնակիչքն Ջամախու գաւառի Մաղրասայ գիւղի, Ղուբայ գաւառի Քիլվար և Խաչմաս գիւղերի, և Նուխի գաւառի Նիժ և Վարդաշէն գիւղերի, որոց և Ուտի են ասում՝ Ուտիացւոց գաւառումն բնակուելու համար, և այս վերջին երկու գիւղերի բնակչաց լեզուն իսկապէս Աղուանից լեզուն է, ինչպէս քանի գիտնականք հետազօտել և վկայել են գիտնական միջոցներով. վասն զի մատրասեցւոց,